

ԵՐԵՎԱՆԻ ԹՈՒՆԻՍԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

Վշտալի Ներսէս քահանայ, Թարգման եւ Մարիամ Ղաֆազեանները յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին երէցկէն

Ե Ղ Ի Ս Ս Ի Թ Գ Ն Մ Ե Զ Ե Ն Ի

մարտի Թուրքականութիւնը կը կատարվի չորեքշաբթի, յունիսի 26-ին, առաւօտեան 10 ժամին. դէպի Կոնստանդնուպոլիս. Առաւելեալ ծանօթեցնելու համար Մարմինը կամփոփվի Կոնստանդնուպոլիս գերեզմանատանը:

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Միջխորական հետեւանքներ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսուցչական ժողովը Գանձակում. Նամակ Բաթումից. Նամակ Շուշուց. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Ռուս-թիւրքական պատերազմից.

ՄԻԹԻՐԱՎԱՆ ՀԵՏԵՆԻՔՆԵՐ

Հանձնարար կարող ենք հաղորդել, որ աշող հետեւանքներ ունեցան այն փորձերը, որ այս տարի կատարվում էին մեր երկրում պատու աստման միջոցով մաքաւելու կենդանիների ժանտախտի դէմ: Պատուաստված կենդանիները ազատ մնացին մահից, կամ մահացան շատ քիչ քանակութեամբ:

Փորձերը գլխաւորապէս տեղի ունեցան Բորչալուի գաւառում, ուր ժանտախտի շիջումով պատուաստեցին մի քանի հազար կենդանիներ: Շիջումը բերել էին ատու Սիբիրից, ուր նրա պատրաստութեան համար յատուկ կայարան կայ: Եթէ լին մուտքի մեր ընթերցողները մի այլ պիտի չիջուկ պատրաստող կայարան էլ հիմնված է Անդրկովկասում, այն է Գանձակի մօտ գտնվող Զուռնաբաղ տեղում:

Բորչալուի գաւառի փորձերը կատարվել են ոչ միայն գիւղական անասունների, այլ եւ կաթնատնտեսութեամբ պարագլուղ մի քանի կալուածներին նախիրների վրա: Մեծ դիրքով փորձերը տեղի ունեցան եր-

կու կալուածներում, որոնցից մէկում պանրագործարան ունի Ն. Կեղեկի, իսկ միւսում Հ. Ամետեւ: Երկու կալուածներում գտնվում են մօտ 800 գլուխ կիթն: Հէնց որ ժանտախտի առաջին դէպքերը տեղի են ունենում, անասնաբուները իսկույն սրտկում են շիջումը թէ հիւանդ եւ թէ առողջ անասուններին:

Փորձի հետեւանքը այն եղաւ, որ առողջ կենդանիները, պատուաստումից յետոյ, անվնաս մնացին եւ նրանցից մահացան միայն երկուսը: Նոր հիւանդացած կենդանիներին մեծամասնութիւնը նոյնպէս առողջացաւ, իսկ փորձամանուկութիւնը մահացաւ: Վերջապէս կատարեալ հիւանդները, որոնք մի օրից աւելի ջերմել էին, չազդեցին պատուաստումից եւ մահացան: Դիտողութիւնները ցոյց տուին, որ ամենից լաւ դիմանում են ժանտախտին Բորչալուի տեղական անասունները, աւելի դիւրաբար են օտի կովերը, որոնք հիւանդանում են աւելի խիստ կերպով եւ շուտ մահանում են: Շվեյցարական կովերը նոյնպէս դիւրաբար են դէպի ժանտախտը: Անասնաբուները փորձեցին առաջին պատուաստումից յետոյ վարակել անասուններին իսկական ժանտախտաբուներին արիւնով եւ եկան այն եզրակացութեան, որ այդ վարակումը մահացնող է:

Ով ծանօթ է մեր գիւղական կեանքին եւ գիտէ, թէ ինչ ահագին վնասներ է հասցնում ժանտախտը գիւղական աղքատ բնակութեանը, նա կը գնահատէ այդ աշող փորձերի նշանակութիւնը: Վերջին երկու երեք տարիներում մենք ստանում

լինեցին դէպի Ալեքսանդրոպոլ եւ այդտեղ ամրանալով, սկսեցինք սպասել թիւրքերին:

Բանակի հրամանատարը, գնդապետ լեյտենանտ իշխան Բէհրուժով, միւս օրը չարեւով բոլոր զօրքերը, առաջ կանչեց աւազ եւ կրտսեր օֆիցերներին, ուստեւ-օֆիցերներին, ֆելդֆելներին եւ իւրաքանչիւր վաշտից հինգ-հինգ հասարակ զինուորներ, զիմեց նրանց մօտաւորապէս հետեւեալ խօսքերով.

— Մենք երէկ նահանջեցինք դէպի քաղաքը, բայց չուտով, երկու-երեք շաբաթից յետոյ, ես ձեռք ցոյց կը տամ մի տեղ, ուր դուք թիւրքերից սաստիկ վրէժ կ'առնէք երէկվայ օրվայ փոխարէն: Միայն յիշեցէ՛ք իմ, իբրեւ հին զինուորի, խորհուրդը, եթէ դուք կուի մէջ մի քայլ անէ՛ք դէպի յետ, թիւրքերը կը նստեն ձեր շրջանները եւ այն ժամանակ դժուար կը լինի նրանց հետ բան տեսնելը:

Երկու շաբաթից յետոյ, 1854-ի նոյնամբերի 18-ին, տեղի ունեցաւ Բաշ-Կադիկարի կռիւը, որի մէջ թիւրքաց բանակը թուով եթէ անգամ աւել էր մեր բանակից: Այդ բանակը ոչ թէ ջարդվեց, այլ բոլորովին ոչնչացրվեց. թնդանօթներ, զօրներ, գնդերային եւ ամբողջ գրեգոր գերի ընկան մեր զօրքերի ձեռքը եւ ազատվեցան հազարաւոր հայ ընտանիքներ, որոնք թիւրքերը գերել էին մեր սահմաններում:

Բաշ-Կադիկարի ճակատամարտը վերջանալուց յետոյ, մեր բոլոր զօրքերը իրանց զբաւած ռազմական կէտերից յետ գնացին դէպի բանակի տեղը ձանապարհին ետեւից լավից մի ազդեղ—ազալիս է հրամանատարները: Զօրքի հրամանատարները չարքերի երեսը դէպի ճանապարհը դարձրին Շուտով երեսաց Բէհրուժով:

էինք մեր գաւառներից բազմաթիւ գանձատներ այն վերին աւտիճանի մեծ դրժուարութիւնների եւ ճնշումների վրա, որ պատճառում էր գիւղերին անասնաբուժական հսկողութիւնը: Հէնց որ մի գիւղում երեւում էր ժանտախտ անասնաբույժը արգելում էր այդ գիւղի երթեւեկութիւնը սայլերի միջոցով միւս գիւղերի հետ, թող չէր տալիս անասուններին դուրս բերել դաշտ եւ բանեցնել հողագործական պէտքերի համար: Գիւղացիների համար այդ արգելքները անտանելի էին, բայց նրանք ստիպված էին կատարել հրամանը: Վարչութիւնը ինքն էլ լաւ գիտէր, թէ որքան նա զրկանքներ էր պատճառում գիւղին, բայց նա ուրիշ ելք, ուրիշ միջոց չուներ ժանտախտի տարածումը կանգնեցնելու համար:

Ներկայումս էլ շարունակվում են նոյն արգելքները եւ կը շարունակվեն, մինչեւ որ վերջնականապէս կը հաստատվի ժանտախտի պատուաստման եղանակը իր կատարելագործված ձևերով իբրեւ մի պարտաւորեցուցիչ եւ հանրային սիստեմ: Պատուաստման փորձերի աշող հետեւանքները մեզ մօտեցնում են այդ ժամանակին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՅՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԳԱՆՁԱԿՈՒՄ

(Նամակ Գանձակից)

Անցեալ տարվայ պէս այս տարի էլ Գանձակում, ժողովրդական ուսումնարանների տեսչի նախաձեռնութեամբ, կայացաւ ուսուցչական մի ժողով: Այդ ժողովին հրաւիրված էին յիսուցից աւելի գիւղական վարժապետներ: Ժողովի նպատակն էր. 1) ծանօթացնել գիւղական վարժապետներին շերամապահութեան եւ այլեգործութեան հետ եւ 2) տալ փորձնական դասեր բնական մեթոդով, որ վերջին ժամանակներս սկսեց կամայականաբար տեղ ընդ ներ դասաւանդման ձևերի մէջ: Ժողովը շարունակվեց մի ամիս, վերջանալով յունիսի 10-ին: Այդ ժամանակամիջոցում վարժապետները ծանօթացան շերամապահութեան եւ այլեգործութեան գլխաւոր եղանակների հետ:

Ղարաբաղի ոսկեգոյն նոյնի վրա Զօրքերը պատու տուին եւ օրը աղմկեցին «ուռն» աղաղակներով: Ամբողջ ուշադրութիւնը դարձաւ նրանց, իսկ երբ նա մօտեցաւ, ամբողջ ժողովը դէպի գետին խոնարհեցրեց, արտայայտելով շնորհակալութիւն ազատութեան համար: Շատերը սողալով մօտեցան իշխանի ձիուն եւ սկսեցին համարել նրա ոտներն ու թամբի ասպանդակները:

— Կանգնեցէ՛ք, լռեցէ՛ք եւ հետացէ՛ք ձիուց, — կանչեց Բէհրուժովը:

Ամենք լռեցին, այնպիսի լռութիւն տիրեց, որ կարծես այստեղ մարդ չը կար:

— Դուք ինձ շնորհակալութիւն էք անում գերութիւնից ազատվելու համար—գիմեց Բէհրուժովը հայերին:—Այո, դուք ազատված էք թիւրքական լուծից եւ կեղեքումներից, ձեր կանաչ եւ երեխաները ազատված են տանջանքներից եւ վաճառվելուց, բայց այդ ազատութեան մէջ ես գործ չունեմ: Զեք ազատողը ես չեմ, այլ հայա ով ազատեց ձեզ գերութիւնից, ահա ում պէտք է շնորհակալութիւն յայտնէք: Դուք ամբողջ կեանքում—վերջացրեց իր պարզ եւ բարձրաձայն ձայնը Բէհրուժովը, ցոյց տալով բառալուծը:

Թէ ինչ տեղի ունեցաւ դրանից յետոյ,

Մասամբ ուսուցիչների նիւթական դրութիւնը բարեփոխուեալ եւ մասամբ հողից օգտվելով կանոնաւորապէս ժողովրդի մէջ տարածելու նպատակով վարչութիւնը ամեն մի ուսումնարանի յատկացնում է մօտ 2—3 դեսեատին հող, որտեղ գիւղական ուսուցիչները կարողանան պարագլուղ գիւղատնտեսութեան դասաւանդել: Բայց որովհետեւ վարժապետները մասնագիտաբար այդ գործերի հետ չեն ծանօթ, ուստի ուսումնարանական վարչութիւնը այդպիսի ժողովներ է սարքում ծանօթացնելու նրանց գիւղատնտեսութեան այդ ճիւղերի հետ:

Ժողովը գումարված էր Գանձակի արհեստաւորաց զարդոցում, որտեղ կարելի եղաւ այլեգործութիւնը եւ շերամապահութիւնը անցնել թէ տեսականապէս եւ թէ գործնականապէս: Գիւղատնտեսութեան այդ երկու ճիւղերի մասին ամեն օր կարդացվում էին դասախօսութիւններ: Դասախօսը առաջին անգամ բոլոր գիւղատնտեսական ուսումնարաններին մասին զեկուցումներ տուեց: Զեկուցումից երեւաց, որ բոլոր գիւղատնտեսական ուսումնարաններում ամբողջ Ռուսաստանում սկզբից մինչեւ այժմ աւարտել են իրանց ուսման ընթացքը մօտ 1100 հոգի, սակայն այդ թւից միայն 72 հոգի են դուրս եկել եւ գնացել մշակելու իւրանց հողը, մօտ 100 հոգի ծառայում են ուրիշ հողատէրերի մօտ, իսկ պատկանելի մեծամասնութիւնը—մօտ 930 հոգի—պարագլուղ իրանց մասնագիտութիւնից դուրս գործերով: Բանից երեւում է, որ բոլոր գիւղատնտեսական ուսումնարանները, չը նայելով նրանց վրա արած ահագին ծախքերին, առ այժմ բոլորովին չեն ծառայում իրանց նպատակին: Նկատված է, որ գիւղացի երեխաները, այդպիսի ուսումնարաններ աւարտելուց յետոյ, չեն վերադառնում իրանց գիւղերը, այլ խոյս տալով հողի հետ գործ ունենալուց, յախշտակվելով խաբուսիկ երազներով, վազում են զանազան քաղաքներ աւելի փափուկ պայտօն ստանալու տենչով: Այդ է պատճառը, որ ուսումնարանական վարչութիւնը կամենում է դէժ ռուսացիների միջոցով տարածել հողագործ գիւղացիների մէջ այն, ինչ նպատակ դրել են գիւղատնտեսական ուսումնարանները:

Սակայն որքան միջխորական եւ ցանկալի պատուներ տուեց ժողովը իր առաջին նպատակարար նիւթագրեր:

Հայերի ամբողջ խումբը, 1000 հոգուց ոչ պակաս, նրանց կանաչ եւ երեխաները այլեւերի պէս թափվեցին զօրքերի շարքերը եւ լացով յայտնեցին շնորհակալութեան խորին զգացմունքը, սկսեցին համարել զինուորների ոտներն ու ձեռքերը. երեխաները մէկից անդնում էին միւսին, նրանց մայրերը սողում էին շարքերի մէջ, գրկելով զինուորների ոտները...

Յուզվեց կուի մէջ ամբողջ ռուս զինուորի սիրտը, այդ տեսարանը ցնցեց նրան մինչեւ հողու խորքը, բառալուծին շարքերը երեքացին սաստիկ յուզմունքից, այն զինուորները, որոնք մի հինգ րօպէ առաջ անվախ կանգնած էին ուսուցիչի եւ գնդապետի տակ, այժմ չը կարողացան դապել իրանց արատաւները: Լաց էին լինում ամենքը, լաց էի լինում, ի հարկէ, եւ ես, կանգնած շարքերում եւ դժուար էր շարտաւել այն տեսարանից, որ տակն ու վրա էր արել մեր ամբողջ հոգին:

Այդ տեսարանի ազդած խոր տպաւորութիւնը յետոյ փոխվեց մի խացուցիչ եւ երկարատեւ աղաղակի «ուռն» էին կանչում զինուորները եւ ասում էին. Ամենքս պատրաստ ենք մենեւ այսպիսի հրամանատարի համար: Ամենքս Ուռն...

Բէհրուժովը գիտէր, թէ ինչպէս պէտք է գրաւել զինուորներին, ինչպէս նրան դարձնել մի կարեկից մարդ պատերազմից դուրս եւ մինչեւ ինքնամոռացութիւնը դիմացկուն պատերազմական ընդհարումների մէջ: Ասորուն յաղթութիւնները երեւան համեցին իշխան Բէհրուժովի անսահման հաւատը դէպի զինուորը:

